



Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 32

— ՏՈՒՐԱԹ —

6 ՕԳՈՍՏՈՍ 1905

Կ. ՊՈԼՈՑ ՀԱՄԱՐ	ԳՍԻԱՌԱՅ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍՈՂՄԱՆԻ
Տարեկան 50 Ղր.	Տարեկան 54 Ղր.	Տարեկան 12 Ձր.
Վեցամսեայ 25 »	Վեցամսեայ 27 »	Վեցամսեայ 6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԺԱՌԱՑՈՒՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՑՈՑՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՅ

Կ. Պոլիս, ձեռք Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն բնել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեղիկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը տրջին :

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջեմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ՁԵՆԻԹՐ՝ քե՛ Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գոհացուցիչ պայմաններով :

Ծանօթ. — ՁԵՆԻԹ ժամացոյցները Բարիքի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարսա

ԱՐՏՈՆԱՏԻՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՆԱՆ

(کتبخانه جهان) مطبعه سی — باب عالی جاده سی ۲۳

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Կ. Պոլիս Պապր-Ալի ճասսկսի քիւ 23



Ձեռքի, ոտքի ու ոտքի եւ ձեռքի
միանգամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ,
բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ
մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատու-
ցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց
և տալտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ զիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Բ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅՍ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը,
հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բոլանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գտնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ:

ՇԱՐՔԱԹԱԿԱՆ
ՄԱՍՆԱԴԱՐԱՆՆԵՐ

ՌԵՐԱ.

1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին.
2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ.

ԿԱՆԱԹԱ.

1. Սինկեր խան, Թիւնէլի եռեւեղ.
2. Գարաքէօյ, Թրամիլէյի կայարանին դէմ.

ՊՈԼԻՍ.

1. Սուլթան համամ.
2. Սուլթան Պէյադլիտ, Թրամիլէյի կայարանին դէմ, թիւ 13.

ՍԵՐԱՏԱՐ.

Զարչը Պօյու, թիւ 120.

Կատարեալ երաշխաւորութիւն

Մասնաձիւղեր գաւառներու բոլոր քաղաքներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 և
343 կրկին, Տիւզդուլուի տունը:



بوغينه - جوهريه

BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍԵՈՒՆԴ

Bovinineը որ զուտ սակորներու ծուծէն, ուղեղէն պատրաստուած զօրառոր, կազ-
դորիչ, և մինչև հիմա գտնուած specialitéներու մէջ հազարաւոր Ամերիկացի բժիշկ-
ներու կողմէ առաջնակարգը և անզուգականը հռչակուած է:

Ամէն անոնք սրտնք, կզգան անախորժութիւն, սկարութիւն, նիւարութիւն, դաշ-
կութիւն, անարիւնութիւն եւայլն, պէտք է անմիջապէս սկսին գործածել Bovinineը,
որուն արգիւնքը թէ չուտ և թէ գոհացուցիչ պիտի գտնեն:

Bovinineի միակ ներկայացուցիչը՝ ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԲԱՐՔ, Պահէ-Գարու Նամակա-
տան կռնակը:



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/ւ 32

ՇԱԲԱԹ

6 Ognusnu 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարելու պէտք մը (Խմբագրական) : Կենաց ջուր (Պարզ պատմութիւն) . — ԼՆԻՈՆ ՇԱԹՐՆԱՆ : Գրգռում (Ոսանաւոր) . — ՍՈԿՐԱՏ ՍԱՐԱՖԵԱՆ : Հարցումներ անկապ եւ յանգապատում , երբեմն ազուր , երբեմն ալ . . . դրդում ! — ՎԱՀԱՆ ԵՆ ՍԻՍԱԿ : Հիւանդ եմ . — Վ. ՓԱՓԱԶԱՆ : Կանանց բժշկութիւնը (Մեռելկոյն , Տրեկիկ) : Զուարթ ժամեր . — Յ. Մ. Ա. : Գիւղական պատկեր . — ԳՐ. Տ. ԱՐԲԱՀԱՄԵԱՆ : Զգայնութիւններ (Ոսանաւոր) . — ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ : Մանկական հոգի . — ԱՀԱՐՈՆ Ս. ՏԱՏՈՒՐԵԱՆ : Երանութիւն (Ոսանաւոր) — ԱՆԴՐԱՆԻԿ ԵՍԱՅԵԱՆ : Աչքերդ (Ոսանաւոր) — ԻՍԿՈՒՀԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ : Կապիկներու աշխարհին մէջ (Հանրագիտակի բերքօր) . — ԼՈՒԻ ԺԱՔՕԼԻՍ :

ԿԱՐԵՒՈՐ ՊԵՏՔ ՄԸ

Հակառակ կրթասէր ժողովուրդ մը ըլլանու , հակառակ դատարարական թեան ճարտուն մէջ մեր զաւակներուն քայլ մը աւելի առնել տալ փափաքելնու , շատ քիչ կ'ըբազինք անոր հիմնականին , էական մասերուն հետ :

Հիմա որ դպրոցական սեզոնին մէջն ենք , ամէն ժամանակէ աւելի հրապարակային նիւթ կը դառնայ մեր Ազգ. Վարժարաններու մտկարդակին քիչ մըն ալ բարձրացուիլը , և մեր ուսանողութեան քիչ մը աւելի նիւթ ամբարելլը , կեանքի մէջ դնել անխղճնդոտ յաջողելու համար :

Սակայն չի խորհուիլ թէ , երբ պահանջումները մէկ կողմէն կը բազմապատուկուին , միւս կողմէ պէտք է զրհուրթեան ատրիճանը բարձրացնել , ձեռնառութիւն մը աւելի բերել , նիւթականի երակ մը բարդել հինին վրայ , զոյն հասցընելու մոռք այն բարոյական պատուանդանին ուր կը ձգտի կրթութիւնը և յառաջդիմութիւնը :

Առնուելիք այս քայլերէն մէկն ալ դատարարական մշակներուն ուսուցիչներուն և ուսուցչուհիներուն բարոյական , մտաւորական և նիւթական բարելաման հարցն է , որ հակառակ իր կենտական և անսխալական առընջութեան , դեռ մեր մէջ կը մնայ լքուած , անտեսուած և ընդունուած :

Յաւանական յանկերդ մը եղած է մեր վարժապետներուն մեծագոյն , տիրող մասին ապիկարութիւնը , անկարողութիւնը և խեղճութիւնը : Այսօր դադանիք մը չէ թէ մեր վարժարանները իրենց մէջ կը համբն մէկէ աւելի մշտաւորական մշակներ՝ ծոյլ , ագէտ և իրենց կոչումին անդիտակից մարդիկ , որոնց քանակը դժբաղդարար հետզհետէ աւելնալով , ճոխանալով , կուգայ կը փնտսէ միւսներուն , քիչ մը արժանաւորներուն ալ որակին :

Գէշ ապրանք մը , կեղծ նմանութիւն մը նոյն պատրանքներով և նոյն տաքին փայլով , կը փնտսէ լուին , բուն իսկ ճարտարարուեստին և հետեւարար ընդհանուր հրապարակին :

Այս աշխարհիկ նախնական սկզբունքը անվրիպելի չի կրնար մնալ գրական և մտաւորական ասպարէզին մէջ , ուր կեղծը՝ կը գրուէ յաճախ արժանաւորին տեղը և աժանը , կուգայ վտարել արժէքաւորը , քանի որ արտաքին երեւոյթը նոյնն է գրեթէ , սև ընտէնկութիւն , առփախ երեսով , հովանոցը թելին տակ վարժապետն է որ կուգայ , մանաւանդ որ կեղծերը , ապիկարները քիչ մը աւելի ունին խոնարհելու , ժպտելու , քծնելու և կեղծաւորելու չափը , որմէ այնքան փափուկ դժուանքներ կը գայ մեծապայտութեան ստուերը :

Պէտք է վտարել այս մղրտութիւնը , այս աղտոտ և դիւրախար բարքերը մեր մէջէն , պէտք է անկեղծութիւնը և համարձակութիւնը տիրէ ամենէն աւելի հոն ուր վաղուան սերունդը մտաւորապէս կը մարզուի , կը դարձնուի , կը պատրաստուի : Վարժապետին պէտք է տալ իր արժանի յարգը , անկուշկանդ գործունէութիւնը և գոհացուցիչ , կշտացունող վարձատրութիւնը , եթէ կուզենք որ առաջ բերուի գեղեցիկ և լուսագոյն արդիւնք մը , հեռու ցուցամոյլիկ և պոռոտ երանգներէ , որոնք հիմը կը փոտեցնեն , բնականին աղւորութիւնը կ'եղծեն :

Բայց , իրաւացի դիտողութիւն մը կարելի է ընել : Իրաւ է թէ մեր վարժապետները իրենք իրենց խղճին , իրենք իրենց գործին անկախօրէն ձգուելու արժանի մարդիկ են : — Որչափ ալ որ լուստես ըլլանք չենք կրնար հաւանութեան գլուխ շարժել այդ տեսակ բանի մը : Ո՛չ թէ վարժապետները , այլ ուրիշ ու է աշխատող ալ պէտք չէ ձգել ինքն իր գլխուն , ինքն իր ընթացքին , քանի որ մարդկային է ձանձրանալը , յողնիլը և յողենալը : Մարդ մի և նոյն ոտին վրայ չի կրնար կենալ միշտ , մի և նոյն երգը չի կրնար երգել և մի և նոյն դուռը նոյն եռանդով , նոյն տարփանքով չի կրնար շարունակել : Պէտք է միշտ հսկողութիւնը , հակակշիռը չի պակսեցնել մանուանդ կրթական պաշտօնեաներուն վրայէն , ցորչափ վստահ դադարար մը և գիտակից ճանաչողութիւն մը չունենանք անոնց նկարագիրին և մտաւոր կարողութիւններուն վրայ :

Հետեւաբար , այդ վստահութիւնը , ինքնավարութիւնը տալու համար , մեր դատարարականութեան մարդիկներուն , պէտք է անոնց տալ միտքի կարողութիւններ , նկարագիր , ինքնաճանաչութիւն , պաշտօնի գիտակցութիւն և արհեստին սէր :

Եւ այս ամէնքը , պատահական , աստանդական զարդացումով մը ձեռք չի բերուիր , աւարտամ , անկազմ միջոցներով չարգիւնաւորուիր , թաղային վարժա-

լուսնի մը պաշարովը, տուածովը չի պաղարբերիր, այլ կուզէ հիմնական, ուժով և կանոնաւոր կազմակերպութիւն մը, որոշ դաստիարակութիւն մը և մարզանք մը:

Ուրեմն, պէտք է հաստատութիւն մը ուր վարժապետը պատրաստուի ասպարէզին բոլոր պահանջումներովը, բոլոր փորձառութիւնովը և պէտքերովը: Խօսքը վարժապետանոցի շուրջը կը դառնայ, առանց որուն կարելի չէ ակնկալել որ լաւագոյն ծաղկիկներ քաղուին մեր կրթութեան ածուներէն, քանի որ մշակող պարտիզպան չկայ, ճարտար պատուաստող ու յօտող չկայ:

Վարժապետանոցի խօսքը շատ հին է մեր մէջ, բայց գործադրութիւնը շատ հեռու: Քանի կը յիշենք ինքզինքնիս, կը յիշենք նաեւ վարժապետանոց մը հաստատուելու, անոր անհրաժեշտութիւնը դրուատող խօսքը, նոյն իսկ Ազգ. Վարչական շրջանակներու մէջ, հանդիսաւոր առիթներու ատեն:

Բայց կերեւի թէ կամայ կամաց գործադրութեան ճամբուն մէջ կը մանէ այդ ծրագիրը, եթէ ոչ ուղղակի, գոնէ անուղղակի կերպով:

Եթէ անշատ վարժապետանոց մը չի հաստատուիր, անգին մեր Ազգ. երկրորդական վարժարանին՝ Կեդրոնականի մէջ կը հաստատուի Մանկավարժութեան դասընթացք մը որ զիւրութիւն պիտի ընծայէ այն բոլոր աշակերտներուն, որոնք նոյն վարժարանէն շրջանաւարտ՝ ուղեն ուսուցչութեան ասպարէզը ընդգրկել:

Այս գործադրութիւնը մեզի կը յիշեցնէ ծրագիր մըն ալ, որուն համաձայն ատեն մը կը փորձուէր Կեդր. Վարժարանը վերածել Վարժապետանոցի:

Թէ՛ սրշափ նպատակայարմար է Կեդրոնականը վերածել ատանկ հաստատութեան մը, կամ որչափ կարեւոր է Ազգ. երկրորդական միակ հաստատութեան մէջ մանկավարժութեան և դաստիարակութեան ճիւղ մը հաստատել, մեր նպատակը հոս՝ այդ չէ:

Կրնան առարկութիւններ վերցունել թէ մենք աւելի առեւտրական և լեզուադիտական ծանօթութիւններու պէտք ունինք հրապարակին վրայ քան թէ մանկավարժութեան, հետեւաբար ուղիղ չէ Կեդրոնականը Վարժապետանոցի վերածելու ձգտումը: Այս դիտողութիւնը իր արդար հիմը ունի, բայց քանի որ այժմ ատանկ գործադրութիւն մը չկայ, այլ մասնակի իրականացում մը որ չի փնտսեր ուրիշ մասերու, գոհունակութեան ուղիթ մըն է միայն:

Մենք կրթապէս շատ բան կ'սպասենք Կեդր. Վարժարանէն իբր երկրորդական կրթարան: Իր ծրագիրը արդէն այնպէս մը կազմուած է որ բազմակողմանի և ամէն պիտանջներու անդ տուող երեւոյթ մը ունի: Հաճոյքով կողջունենք իր մէջ հաստատուիլը Մանկավարժութեան դասընթացքին, որ պէտք մըն էր իր տեսակին մէջ, դէթ հատ մը գտնուելու համար գոնէ:

Ասիկայ լաւ քայլ մըն է որ առնուած է, բայց մաղթելի էր Կեդր. Վարժարանը իր լեզուական և առեւտրական ծանօթութեանց ճիւղին ալ ուժ տար առաւելապէս, հաղցներու համար այնպիսի անհատներ, որոնք սրբան կարող ըլլան ուսուցչութեան ասպարէզին վրայ ոտք դնելու, նոյնքան յաջող արդիւնքներ ձեռք բերեն վաճառականութեան և ճարտարարուեստի հրապարակին վրայ:



ԿԵՆԱՑ ՋՈՒՐ

(ՊԱՐՁ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ)

Իր բնական արուարձանին մէջ մատուցելը ցուցնէին զինքը: Իր հովաւտայի, խմանի, բուերով, աիերով ստակ ուտողի հանգամանքը բերնին ջուրերը վազցնել կուտային շատերու և հացկատակներու մնայուն խումբ մը շարունակաբար կը լայննար, կը բազմանար անոր շուրջը:

Ամուսնացած էր. կնոջ ու աղջկան ալ տէր. գործը շատ լաւ հիմերու վրայ հաստատուած ան ատեն երբ զինքը ճանչնալու պատահութիւնը ունեցայ. կարմրեալ, դիւրուկ մէկը հաճի Պետրոս, ցանցառ, սեմօրուք մը իր բոլորչի գէմքին վրայ, ու աչքերը, յարաշարժ ու միշտ արիւնալի, շեղուի մըն էին այս արտաքուստ խելօք մարդու երեւոյթին վրայ, շեղում մը իր կենցաղին նմանակ, որ հազիւ հաղարներէն մէկուն մէջ կրնար գտնուիլ:

Իր խմանի համբաւը, որ իր թաղը դիւանցնելով տարածուած էր ամբողջ քաղաքին մէջ, բնաւ տխրութիւն մը, ամօթ մը չէր համարեր իր ընտանեաց հօր հանգամանքին, բնաւ. ընդհակառակն, անով էր որ կը պարծենար: Հոն, իր օղիի գաւաթին մէջն էին իր ամբողջ զուարճութիւնները, իր ամբողջ ժամանցները և ուրիշ օրուան մէջ կրնար հազիւ քանի մը ժամ բաժնուելու, Գուրգուրանգին հօր մը սէրն էր այս օղիի սէրը, անձնուէր մօր մը աղապատալից սէրը, որ օր աւուր լայնցեր, տարածուեր էր իր ներսը, և բնութեանը մասը կազմեր:

* *

Ան տարին Ալէմտաղի դպրեր էր Հաճի Պետրոս: Ընտանիքին վրայ այնչափ սէր ունեցող մէկը չէր արդէն ինք, օղին առած էր իրմէ ամբողջ իր ներսի գուրգուրանքներն, աղապատանքները զորս մարդ կուեննայ ուրիշներու վրայ, ու կրնն ալ արդէն արմարեր էր ամուսնին այս սանձարձակ կենցաղին:

Ան տարին, ինչպէս ըսի Ալէմտաղի էր Հաճի Պետրոս, Արեւելեան նուագածուններու

ընտիր ներկայացուցիչներու խումբը ժողովեր էր գումար, և իրիկուան զովութեանց, ստուերներու մէջ եղանակները հեշտագին մեղամաղձաութիւն մը կ'առնէին ու կը նուազէին հանգարաիկ մթնոլորտին զիրկը, ծագիկներու բոյրերովն աւելցուն Հաճի Պետրոս իր դերին մէջն էր. սեղանները երկար ցուցահանգէս մը կը կազմէին ամէն տեսակ աղանդներով ու պոսուղներով բեռնաւոր, և օղին շիշին մէջ, բիւրեղի ցուցումներ կ'ունենար իրիկնամուտի հիւանդ ճաւաղայթներուն առկ, որոնք ծառերու թաւ կանանչէն կը մաղուէին:

ԱՅնք, համբաւաւոր ուր զարնողը, հիւնալի ճկունութիւններ կուտար եղանակներուն. մասները կը թռչէին աղիքներուն վրայէն, անշունչ իրէն Արեւելքի անուշ քաղցրագին մեղկութիւնները հոսեցնելով ալքովէն հրահրած երակներու մէջ: Հաճի Պետրոս ոտքի կ'ելլայ յանկարծ. կը գիտեմ զինքը, արդեօք ինչ պիտի ընէ, կ'առնէ նուագածունն ուտը, և դրսանէ հանկով ափ մը ոսկի, կը տարածէ նուագարանին վրայ, ամբողջ երեսը ծածկելով. առ նուագն քսուսուն ոսկի մը կայ, կը գիտեմ:

Բարիւղի տուփեր կ'այրին իրարու ետեւէ, հիացիկ ու լուռ ամբոթի մը ներկայութեան:

Պիշերը կը յառաջանայ ու ես կը մեկնիմ ձգելով Հաճի Պետրոսը իր հաճոյքներուն մէջ և հեռուէն դեռ ականջիս կը հնչէ տակաւ մարդ արձագանգը ջութակին ձայնին, գարնանային խաղաղ ու լուսադարձ երկինքի մը տակ:

* *

Երկու երեք տարի ետք յանկարծ իր սրնանկանալու լուրը չի գարմայներ բնաւ զիս. օղիի գաւաթը գերեզմանն է եղած իր ամբողջ յաջողութիւններուն և հիմա ալ թերեւս մեռցնող բալասանը իր անցեալ յաջողութիւններուն ու ներկայիս անյաջողութիւններուն ամթած ցալին:

Իր անցած հարստութենէն հազիւ մէկ երկու տուն կայ իր ձեռքին տակ հիմա, բայց նորէն միջով ապրող մը չ'է այս մարդը, արդի անյաջողութիւններն ու դժբաղդութիւնները աւելի բորբոքած են սէրը օ-

ղիին և հիմա աւելի քան երբէք փարած է անոր, սիրուած հումանիտի մը պէս, անոր հեշտանքին, վայրկեանական ինքնամոռացման մէջ փնտռելով կօկիծը յիշատակին իր երբեմնի լաւագոյն գործերուն:

Անցեալ օր կը հանդիպիմ իրեն Բերա, զբօսավայրի մը մէջ. զինով է նորէն, առջի պատիւը չ'կայ ալ իրեն բայց, ոչ ո'ք, ոչ մէկ նուազածու, ոչ մէկ մարդ իրմով այլևս կը հետաքրքրուի. լքուածի հանգամանքով մը նստած է մէկ անկիւնը, օղիէն դէմքը կասկարմիր, ակնարկը չլմորած, յուսահատ մարդու նուազած ակնարկ:

Կը մօտենամ իրեն, մտերմական բարեւի փոխանակութենէ ետք,

— Հաճի, վաղ չ'անցա՞ր տահա սա օղիէն:

— Վաղ անցնիլ, խենթ ես, ինչ ես եղբայր, ասիկա, առ օղին, ճշմարիտ բարեկամս իմին ամէն օրերուս, ասիկա թշնամիս, ասիկա նաև մտերիմս որ իմ անցուցած յոյսերուս, վերջին կենդանութիւնը կուտայ, պատրալից երազի մը մէջ ապրեցնելով զիս: ԿԵԱՆՔԻ ԶՈՒՐ, իրա՛ւ կեանքի ջուր հիմա ինծի համար, ասիկա որ զիս փճացուց և որ սակայն նորէն զիս կ'ապրեցնէ անասունի կեանքով մը մեղցնելով մէջս ամէն անհատականութիւն, ամէն զգացում, Կենա՛յդ, իմէ:

ԼԵՒՈՆ ՇԱԹՐԵԱՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղտնիկ Գեղեցկութեան, Առողջութեան եւ Երկայնակեցութեան Փրոֆ. Պոյո Լէյնըրտի Թարգմանեց Անգղիերէնէ, Սամուէլ Գ. Վարժապետեան: Կ. Պոլս, Տպագրութիւն, Թ. Մատթէոսեան, 1905:

Հետաքրքրաշարժ, հրապուրիչ, զբօսալի և ամէն սեռի ու հասակի յոյժ պիտանի գրքոյի մը, 248 երեսներէ բաղկացեալ, Թղթակաղմին զինն է 8 դա՛ւ, լաթակաղմինը՝ 10 դա՛ւ: 10 է աւելի գնողներու 15 առ հարիւր, և 50 է աւելի գնողներու 20 առ հարիւր զերչ:

ԳՐԳՈՌԻՍ

Քընֆոյս այսերդ մեծաւ բարձիդ մէջ բաղած,
Վերմակիդ սակ սնդուսէ

Կը մրափես յուշիկ յուշիկ, սիրաւծարծ,
Քուերդ երազ կը հիւսէ:

Քովիդ կանքեղն հոգիս է որ կը պլպլայ,
Ուրկէ կայծեր մեղմ, աղօժ,

Կը կայծկլսան գիրդ ու քնֆոյս մարքիդ վրայ,
Աչքերսուս տեղ նուաղոս:

Շրթունքներդ յոյլ մեղկութեան մէջ տարած,
Կը կարմրիմ մերթ ընդ մերթ,

Ես հեռուէն կը դողդոջեմ, կը դողամ...
Իբեւ գարնան վարդի քերթ:

Մազերդ սրփուած բարձիդ վրայ ձիւներէն,
Միտ կը վառիս բոցի պէս,

Եւ ակնարկդ վեհ Կոյսիմ պէս հրեղէն՝
Իմ աչերէն կը պահես:

Կես մը բացուած վերմակիդ սակ կը տեսնեմ
Թէ հեռանքի, տոբիփի

Առաքեալներն յոյլ մեղկութեան մէջ, վրսեմ,
Զիւն-կուրճեղ վար կը բափի...:

Մուսրիքնե նուրբ շապիկդ կիսաբաց,
Զոյգ մը ուտերդ մոմեղէն...

Հուրի՛, ձիւնի՛, գոլորեթի լոկ կիսուած,
Կես մը հագիւ կ'սօղեմ:

Գիրդ քեւերդ մինչեւ ուտերդ հողանի,
Լանջիդ վրայ բէլ ու մէլ,

Ո՛հ, ձրգած ես, ես ալ, — գինով պիտանի, —
Կ'ուզեմ համբոյր մը քամել:

Բայց, կը դողամ գրգուռելի, կը վախճամ,
Ու կը զսպեմ իմ կիբերքս կուրճիս սակ,
Հոն կը մըխայ սիրքս հիւանդ ու տարած,
Ուր պիտ' վառիմ սիրոյդ բոցերն անապակ:

ՍՈՐԵԱՏ ՍՍՐԱՅԵԱՆ

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ԱՆԿԱՊ ԵՒ ՅԱՆԳԱՊԱՏՈՒՄ ԵՐԲԵՄԸՆ ԱՂՈՒՈՐ, ԵՐԲԵՄՆ ԱԼ... ԴԵՂՈՒՄ!

ՆՈՒՆԻՐ՝ բոլոր Գրագիտութիւններուն

- Աղջիկ մ'օր կըրէ, օրինակ, Մարթա Անունն, ալ ինչպէ՞ս չի մնայ *Martha* :
- Խելէն քիչ մ'աղփաւ, միամիտ մարդուն Ալ ինչե՛ր չընէր կընիկն իր արքունի :
- Դեղեցկութեամբ արդեօք կնային Թէ դրամին է որ միւս կը նային :
- Ո՞ր երեսասարդն չուզեր ո՞ր հաներ Բաղդը իր առջեւ մի հաւուս աճե՛ր...
- Եւ կամ դեռ խիստ քաւմ, դեմքով հիաստանչ Մարմնով ալ լեցուն մի աղուոր զոհանչ :
- Դժբաղդ աղջկը սիրով սիրազեղ, Ինչո՞ւ օր օրի կը կըսէի ասեղ :
- Փորձանք չե՞ կինը, երբ ներա *époux* մը Տգէս է, ու չէ խորամանկ, Եփուն :
- Արդեօք նիհարին կնոջ քէ գերին Շուրջը աւելի արք կը դեգերին :
- Երբ դեմդ ունիս մի գիրգ, համեղ կին Ինչպէ՞ս անձնասուր չըլլաս հա՛, մեղին :
- Կընոջ միսին քով մեղկապարանոց Ինչ էն ալ զարդերն, սուղ ու փարանոց :
- Երանի չե՞ք տար այն ծեր ամուսին Որ հեռ կը մընայ սիրոյ, ա՛հ, մոլին :
- Ամեն սիրոյ դեմ միւս փչող խելէն, Աղջիկ մը մընայ յետոյ գոհ ելին :
- Կընոջ ոտներուն, մանաւանդ հաստին Ի սեւ, սրտերնիս ի՞նչ կ'ըլլան ասդին :
- Ինչպէ՞ս չը կ'սէի ալ ամբողջ հոգի Կին մ'երբ իր առջեւ մի ամբոխ չոփի :
- Յանալս կիները քերել եղեգէն Չե՞ն որ աւելի սիրեն կեղեքին :
- Աղջիկ մը երբ յար խաբէ աս ու աս, Չի՞ վայել անոր մի մեծ պատուհաս :
- Կընոջ համար ի՞նչ չընչին իրեր կան Որոնց հոգի տայ քան քէ... իր երկան :
- Սիրս, ոհ, կուտայինք անոր, երբ, բարէ Գիտնայինք քէ մեզ օր մը պիտ' խաբէ :
- Ճրճմարի՛ս չէ որ, երբ տեղ մ'ըսեր են Թէ կինը չիտէ ձանձաւանալ սերէն :
- Յոյց տալու համար մեզ իրենց մըսին Հրապոյրները, կանայք կը մըսին :
- Ե՛ր ի զուր րափենք միւս աջ ու ձախ ճիգ Դիլսէ հանելու համար մի աղջիկ :

- Իրարմէ հեռու, ո՛հ, կ'ընա՛ք երբեք Դուք հանդարտ մընալ, նշանած երբ էք :
- Հակառակ ներա ճնողին կամաց, Դործը չեփեցի՞նք մեք կամաց կամաց :
- Աղջրկան մ'անոյց աչքերը ծաւի Մեկը չե՞ն երբոր կ'ենթարկուին ցաւի :
- Աղջիկ մ'իբ սիրքը մեզի կուտայ՝ որ Երբ ըլլայ սակայն հաւուս, կուտաւոր :
- Կիներն ինքզինքնին կ'ըն ծախս ծախս Երբ սեր ընդունին աչքն ու ձախեն :
- Կիներն կ'ըն մեզի նաւթու մեջ յանալս Յոյց կուտան իրենց հանգիստում պատուալս, (Եւ կ'ընենքնեն ուտեն ասպա ջալս) :
- Կիները մարմնով լեցուն ու հրեկայ Չե՞ն որ աւելի կ'ըլլան անգագայ,
- Միջոցեւ կինը նուրբ, ո՛հ, բուլս ու նիհար Սիրոյ մեջ անյագ սիրս մը չունի՞ յար :
- Այրերն կ'ըն երբոր կնոջ մերկ' նային, Կարծեն զայն իրօք հրեշտակ մ'երկնային :
- Գրեող կիներուն մեջ արդեօք քանին Սանկ քերել կեանքին խորքին ու գանին :
- Բանաստեղծները, երբոր գայ Մուսան, Ոհ, ինչե՛ր գրել մեզի կը յուսան :
- Աղջիկներն ինչո՞ւ երբոր ըլլան կին Ուժերնին կուտան միւս իրենց լայնին :
- Կինը չե՞ արդեօք մի *պատիւ*, Որուն հետեւինք, վախօններ անքիւ :

ՀԱՆՐԱ ԵՒ ՍԻՍԱԿ

ՍԱՆԹԻՄ ՄԻ ՏԱ՛Ք

ԱՌԱՆՅ ԱՆԳԱՄ ՄԸ ԱՅՅԵԼԵԼՈՒ

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵՆ ՇՈՒԿԱՅ, ԳՈՒԼՈՒՄՃՐԼԱՐ ՎՈՂՈՅ ԹԻՒ 13

Ուր պիտի դառնէք ամէն տեսակ հագուստի, ներսակեղեքի, ծաւառքեղի, աղամանդի, ծաւառքեղի, զոքայներու, և ամէն տեսակ կարասիներու ճիս միջերը մը :

ԵՒ ԳԻՏԵՔ ԻՆՉ ՊԱՅՄԱՆԱԻ

Ա. Պ. Ա. Ռ. Ի. Կ.

Գնած ապրանքներու 20% ը կանխիկ, մնացեալը չարաթական 5% զրէ վճարելով կանխիկ գնողին 5% զեղը :

Հէրճայի վաճառատունը կը փութայ ծաւառքանի իր բաղմաթիւ յաճախորդներուն թէ՛ մօտ տանէն պիտի աւելցնէ տեսակը իր ապրանքներուն, զորս պիտի հրապարակենք յաջորդիւ :

ՀԻՒԱՆԴ ԵՄ



Չորնամ . . . Հպիտի ըսէք գիտեմ, հաւատարմութիւնս հաստատ համոզուած եմ թէ՛ վերնագիրս կարգաւորուող պէս, աչքերնիդ ժամուն դուռը կամ նաւամատոյցներու տախտակներուն վրայ պիտի ըլլայ, որ, ժամ առաջ կարգաւոր համար մահադէս, որ սաւկայն . . . Հպիտի հասնիք վայելելու, ո՛վ դուք՝ որ կանուանուիք Տիկին, Տուտու կամ Օրիորդ, քանի որ ես ձեզի համար, և դուք ինծի համար ստեղծուած ենք, և խախտի չեք երբ պէս իրարմէ չենք կրնար բաժնուիլ:

Հիւանդ եմ . . . , այո՛, քէօռ ըլլամ հիւանդ եմ:

Ոտքս կոտրեցաւ գրեցի, ձեռքս ձեղքեցի գրեցի, այս անգամ ալ մարմինս ամբողջ տկար ու տաքութեան մէջ, նորէն կը գրեմ, որպէս զի առանիս չի պաղի:

Ես շատ բաներու չեմ հաւատար, սաւկայն փողոցէն անցնող ջատուկ մը տառնոցիս փոխան զիս համոզեց թէ՛ վրայիս գէշութիւնը կրնարու, տիկիններու և օրիորդներու չարախօսութենէն յառաջ եկած է, և ըսաւ թէ՛ մէկ օձի գլուխով մը կրնայ զիս բուժել: Հիմայ ձեր մէջէն ազնիւ տիկնայք ո՛վ գլուխ մը (սխտոր) կուտայ ինձ . . .

Ձեմ գիտեր թէ՛ ինչ պատճառ եղած է որ ես այսքան պաղիմ իգական սեռէն, կամ լաւ է ըսել կին ըսուած և ինչ զատ աշխարհքէն պաշտուած արարածէն: Համմէ՛, ո՛վ արդեօք տեղի տուած է այս բանին:

Ձիս ճանչցողները բոլորն ալ մէկ խօսք մէկ բերան կը հարցնեն թէ «այր մարդուն վրայ դերութիւններ չկան արդեօք, որպէս զի անոնք ալ գրչի խարազանիդ ենթարկուին . . . »:

Շատ ու շատ, կարելի է քառապատիկ աւելի, կը պատասխանեմ իրենց, բայց միշտ . . . cherchez la femme: Որովհետեւ գիտնալու է թէ կնոջ երեսէն է որ՝

Չաւակը ամուսնանալուն պէս ամբիս մը չի քշեր առած կնկանը սիրոյն մարը կը ձգէ զատ տուն տեղ կըլլայ:

Խեղճ ամուսինը «կնկանս սիւսին հասնիմ» ըսելով խանութին սեթմայիկն կը խուռէ:

Դարձեալ ամուսիններ կան, որոնք իրենց կնոջը երեսէն ստիպուած են ութը ոսկինոց բլաբօն մը բանալ տանը մէջ, ամբողջ կնկանը եթուածը նայելու համար, որ խօսքով չէ սակիով կըլլայ:

«Կնիկ պիտի առնենք» ըսելով պարտքի տակ մտնող երիտասարդները:

«Կնիկս հավաքիսի պէտք ունի» ըսելով օրապահիկէն զրկող և բացառիկ ծախքերու մատնուող էրկինները:

«Աղջկանս դրախտմատամ» ըսելով տունը տեղը ըռէին դնող և փճացող հայրերը:

«Աղջիկս սիւսիս ուրեղցնեմ, պէլքի միւշտէրի կեղլայ» ըսելով՝ քուռչի կոտորուանքներու համար ոսկի մսխող զավալը զաւելի տէրերը:

Եւ դեռ ինչե՛ր ինչե՛ր, ինչ արտաուող պարագայներէ յառաջ եկած նեղութիւններ, որոնք բոլորն ալ կնկան և անոնց էգ ձագերէն յառաջ կուգան:

Սեռակիցներուս աղօթքը, հակառակ սեռիս անէծքէն զօրաւոր ըլլալուն միշտ պիտի գրեմ, ազնիւ տիկնայք և օրիորդք, միշտ պիտի ձաղկեմ ձեր վարքն ու բարքը, պիտի ջանամ ուղղել զձեզ որպէս զի կատարեալ ըլլաք:

Բարեոյն ու չարին պտուղն ալ կերաւ ձեր նախամայրը, ու նորէն չի կրցաւ կատարելութեան հասնիլ, որովհետեւ այն ատեն «Հանրագիտակ» չիկար, ոչ ալ՝

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ



ԿԱՆԱՆՑ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

[ՄԵՌԵԼԿՈՒ, ՏՐՍԷՎԷ]

ՄԵՌԵԼԿՈՒ

Մարդիկ աւելի չարիք կը գործեն անգլի-
տակցաբար քան թէ գիտնալով . մեր այս
ըսածին իբրեւ ապացոյց կրնայ ծառայել հե-
տեւեալ դէպքը :

Աղքատիկ և միանգամայն վերջին առ-
տիճան տգէտ ընտանիքի մը պատկանող
տասնըվեց տարեկան աղջիկ մը ամսուան մը
միջոցին կը կորսնցնէ իր հասակին յատուկ
եղող չէն ու զուարթ բնութիւնը և կը սկսի
օրէ օր տկարանալ , այնպէս որ ա՛լ հիւանդ
վիճակի մէջ կ'իյնայ : Մայրը թաղին մէջ
բնակող ճանչուր ընտանիքի մը այցելութեան
երթալով կ'սկսի աղջկանը հիւանդութիւնը
պատմել ի ներկայութեան ուրիշ կիւն հիւրե-
րու . և հետեւեալ խորհրդածութիւնները
տեղի կ'ունենան :

— Քա ճանրմ Արմիկ տուտու , Աղնիւի-
կիս քիթը վախիթ մըն է քի կախ է , գլու-
խը բարձէն վեր առած չունի , ի՛նչ ընեմ
չիյտեմ , ի՛նչ ունիս կ'ըսեմ նէ՛ կուլայ :

— Քա աչքս ելլայ , ի՛նչ եղաւ չօճուխս ,
վարդ կըլմանէր մեղա՛յ , պահէ մը վախ-
ցա՛ւ , մտեցա՛ւ :

— Ես ալ չիյտեմ , խուրոնթուէս կը
մեռնիմ կոր :

— Քա քուրուկ , չըլլայ քի մէկը սիրէ ,
է՛հ , գիտես , նիհայլթ ճահիլ է , աստեղ
վաթսուն տարու կնիկները խուտուրմիշ կ'ըլ-
լան կոր :

— Քա չէ , խուզի կըլմանի , տահա տուր
պագալը՛մ :

— Քա երեսին բէնկը նա՛սըլ է :

— Քա ո՛ր է քիմ կարմիրները գետինը
կ'իյնային , հիմա իսէ դեպտեղին է կտրեր ,
խունկ է դարձեր :

— Ուժը նասըլ է , տե՛ղն է , եախօս
տեղը չէ :

— Չէ՛ , ո՛ւր էր քիմ վեր վար կը վա-
զէր , խըզմէթ կ'ընէր , կը լուար , կը սրբէր ,
հիմա իսէ խօթաթելու հալ չունի :

— Քա վախ եալրում , աչքս քէօրնայ :
— Սիրտը նեղութիւն ունի՞ , եախօս
չունի :

— Հէլէ ադ ճիհէթը հիւ մի հարցնիր , եր-
կու խօսք էւել ընեմ նէ՛ հէմ կուլայ հէմ ալ
էօ՛ֆ բիւֆ կը պուլայ :

— Իշտահը նասըլ է , չիւնքի չուտէ՛ նէ՛
բիւսթիւթիւն կ'իյնայ :

— Տաս նէ՛ քիւ մը պան կ'ուտէ , չի
տաս նէ՛ չուտեր , քիւ մըն ալ պէլլի պէլլի-
սիդ հազ մը ունի , էօհէ՛ էօհէ՛ կ'ընէ :

— Ան է որ ա՛ն է , մեղա՛յ , պէսպէլլի :

— Ի՛նչ , քուրուկ , ոտքդ պաղնեմ :

— Ի՛նչ պիտի ըլլայ , մեռելիդիս է եղեր ,
պէլլի բան :

— Մեռելիդիս , քա նէրտէն նէրէյէ :

— Ամա՛ն դուն ալ , հիմա ատոր նէրտէն
նէրէյէն կա՛յ մի եա , մարդ չէ մի՛ , իշտահ
չունի , բէնկը նետեր է , կ'ըսես կոր , ուժ
չունի , սիրտը նեղութիւն կայ , չոր հազ մը ,
է՛յ մեռելիդիս չէ տէ ի՛նչ է , աստար տար-
ուան կնիկ , չիյտեմ զահէր :

— Է՛յ քուրուկ , էս քեզ մեղայ , ատոր
ճարը ի՛նչ է նէ՛ ընենք զաւակս ազատի :

— Քա ճանրմ հէլէ մէյ մը հէքիմի մը
ցուցունենք , նայինք ի՛նչ կ'ըսէ :

— Է՛յ հապա՛ , Ամպեր տուտուն հախ ու-
նի , կ'ըլլայ քի հէքիմի պան կ'ըլլայ , եազ-
լը պան մը չիլլանք ընենք տէ՛ չօճուխին
արունը մտնանք :

— Քա ամա՛ն դուն ալ , Բրաբ տուտու ,
հէքիմները մեռելիդիսէն , կիլիճիքէն , մա-
եասըլէն չեն հասկընար :

— Քա ջուրուկս, հէլէ սա մեռելիկոյին իլաճը շուրուժովը ընենք տէ՛ հղաւ նէ՛ հղաւ, չհղաւ իսէ հէքիմին խըթլըխը չի կայ ես՝ :

— Էյ հապա, բաճօնը խօրաթային ի՛նչ ըսեմ, ի՛նչ պէտք է նէ ընենք :

— Քա Արուս տուտու, խօսքս մտիկ ըրէք տէ մենք հէքիմի մը ցուցուցէք, կ'ըսեմ կոր :

— Էյ չէ ըսի ես, խելքս չհասած պահին չեմ խաւնուիր, մեռելիկոյն է կ'ըսեմ կոր նէ՛ մեղայ . . .

— Էյ իլաճը ի՛նչ է :

— Իլաճը խօլայ է, հարիւր տիրէմ քէնար հաց թաւամ երեք գիշեր պարծին տալը պիտի դնես :

— Սօլու, սօլրամ :

— Սօլրամ, առտուն կանուխ, մարդու հետ չխօսած, ետիդ չհայելով, Ազնիւիկին հետ չիտակ գերեզմանատուն պիտի երթաք, քէնար հացըն ալ ջըխընով պարապար պիտի տանիք, հոն հացը հոգեւոր տիրոջ գերեզմանին վրայ պիտի դնէք, երեք անգամ էթ-րաֆը պիտի դառնաք :

— Ատ ալ աղէկ, խօլայ պան :

— Մտիկ ըրէք, լաֆս մի կտրէք քիմ բուսուլաս շաշըրմիշ չընեմ, Ազնիւիկին ձեռքերը, ոտքերը, գլուխը ան գերեզմանին վրայ պիտի լուաք, ամա ոտքին թառաֆը՝ ոտքը, ձեռքին թառաֆը՝ ձեռքը, գլխուն թառաֆը՝ գլուխը :

— Ատ է նէ՛ պան մը ըսել չէ :

— Կայնէ՛, էյէր ո՛ր մեռելէն քիմ մեռելիկոյն ըլլալը գիտէք նէ՛ անոր վրայէն աւուռ մը հող կ'առնէք, երեք գիշեր բարձին տակը կը դնէք, ետիստ սրտին վրայ, սօլ-րամ շաֆախը չի նետած, շաբաթ առտու շատ կանուխ Ազնիւիկը և ադ հողը չիտակ ան մեռելին գերեզմանին վրայ կը տանիք, « Լոյս Լուսաւորին, հաւատք Քրիստոսին » երեք անգամ կ'ըսէք, ան բարձին տակի հողն ալ Ազնիւիկին կոնակն ի վար կը թափէք, բիրուբակ կ'ըլլայ չօծուխնիս :

ՏՐՈՒՎԷ

Մեռելիկոյն մասին մեր քաղած տեղեկութիւնները հալորդեցինք ընթերցողներուն : Հիմա քիչ մըն ալ Տրսէվէին վրայ խօսինք, և քանի որ այս հիւանդութիւնն ալ ո՛չ դպրոցի մէջ, ո՛չ ալ գիրքերով կը սորվուի, մտիկ ընենք հետեւեալ խօսակցութիւնը որ տեղի կ'ունենայ չէօմէքժի Ք. աղային տունը, ուր երիտասարդի մը հիւանդութեան վրայ տեղեկութիւն առնելու համար քանի մը դրացի կնիկներ ժողվուած են գիշեր ատեն :

— Միրիճան աղան նասըլ հղաւ, երէկ իմացայ քէֆսիդ ըլլալը դէմի Ագապի տուտուէն, սիրտս հատաւ, մէյ մը երթամ տեսնամ ըսի :

— Շնորհակալ եմ, քանի մը օր է քիմ վրան պան մը կը պտըտի կոր, մենք ալ չիյտենք ի՛նչ ըլլալը :

— Հէքիմի մը ցուցուցի՛ք պարէ, ետլ-րում :

— Հրամմեր էք, բերինք, նայեցաւ, հարցուց, փնտռեց, ըրախի շատ կը խմէ՛ մի տէյի իմանալ ուզեց, էյ ի՛նչ մեղքս պահեմ, ըսի քի իրիկունէ՛ իրիկուն անպապճա կը ժողվուին, էյ սուտ չըսեմ ամա մարդ գըլուխ սանկ կէս կէս օխա մը կը խմեն :

— Ի՛նչ իլաճ տուաւ, ան հասկնա՛նք :

— Ի՛նչ գիտնամ, դեղին ջուր մը տուաւ, երեք օրէն պիտի գամ ըսաւ, հրամմեցէք ըսի :

— Սախըն ան դեղին ջուրը չի տաք հա՛, իզին չունիմ : Միտքերնիդ չէ՛, Արուսս ան ջուրը խմելուն պէս թէսլիմ եղաւ մեռաւ :

— Քա աման դուն ալ, զահէր ամէն դեղին ջուր մէկ կ'ըլլայ :

— Չիյտեմ զահէր, աս թիւուիւ հիւանդ-ներուն դեղին ձուրը կէշ կուգայ, էյէր քիմ հապ տար նէ՛ խելքս կը կտրէր :

— Էյ ի՛նչ կ'ըլլայ կոր, քուրուկ, ծունկերը կտրտուքի պէս պան մը ունի՛, նէ-շաթարզութին կա՞յ վրան, լեզուն բասըլ՛ է մի :

— Իշտահը նասըլ է, Շազիկ տուտու :

— Հի՛շ իշտահ չունի, սուր է քի թիւ-թիւնը ֆըս ֆըս կը խմէր, հիմա անկէց ալ կը գանի կոր :

— Սրտի խառնընդու ունի՞ մի :

— Պէլլի պէլլիսի՞ :

— Ըրահաթ կը քնանայ մի գիշերները :

— Ձէ, չալքէչուլք է գիշերները :

— Դող կուգայ վրան :

— Պաղի քէրէմ կը դողայ, պաղի քէրէմ ալ երեսները ալ ալ չ'ըլլայ, սաղ թառաֆին վրայ պառկի նէ՝ կը ցաւի :

— Թապիյէթը նասըլ է :

— Թիթիզ է, հետը խորաթա չըլլար :

— Քա աչքդ խողայ, թապիյէթը քի կ'ըսեմ նէ պաշխա պան ըսել կ'ուզեմ :

— Էյ հասկցայ, աղէկ չէ :

— Կէլինճիկի շոշորդ ունի՞ վրան :

— Ձէ, Նազիկ տուտու, սա կէլինճիկի պան չէ, կէլինճիկին աչքերը բարլամիշ կ'ըլլայ :

— Քա քուրուկ, չըլլայ քի մեռելկոխ ըլլայ :

— Ունմիշ չեմ ըներ, Արմիկ տուտու, հիշ աս մեռելկոխի շոշորդ չունի :

— Քա Աննիկ տուտու, չըլլայ տրսելէ ըլլայ :

— Աճապա՞ կ'ըսես, ի՞նչ գիտնամ, քուրուկ :

— Էյ հապա մեռելկոխ չէ, կէլինճիք չէ, հապա ի՞նչ է, իրեքէն մէկը մուրթլախ ըլլալու է :

— Քա աճապա գիշեր ատեն մութ տեղը պատի մը տակը եախօտ սօխախը ճրլաթ ըրած է մենէ-աղէկները !!! հոն եղած ատեննին :

— Պարէ չըսեմ քի ալ քանի՞ հազար հեզ. «ծօ՛ տղայ, ատ խույէդ վազ անցիր» :

— Էյ պէլլի պան, քուրուկ, անանկ է նէ՝ արսէվէյի պան է, նաֆիլէ չուպնէ մ'ընէք, թըպխը Արուսիս թիւիկը :

— Էյ հապա, Շազիկ տուտուն ասանկ պաներէն մենէ աղէկ կը հասկընայ :

— Էյ եա, անկաճը ծակ մարդուն խօսք չունիմ :

— Աղէկ ամա, քուրուկ, արսէվէյին իւլաճը նասըլ պան է :

— Կատարիցա տուտուն աղէկը գիտէ :

— Աղ պան մը ըսել չէ, թէրթիպները ըսեմ տէ մաիկ ըրէք :

Տասը տիրէմ խայա թուզի ծեծած :

Ինը տիրէմ կուճու չէքէր չծեծած :

Տասուրիք տիրէմ քէնար հայ :

Իրեք տիրէմ քէօմիւր :

Մէկ պճեղսիզ սխտոր մը :

Քանի մը հաա կարի. ասոնց ամէնը չըլլան մը կ'ընէք, իրեք գիշեր պարճին տուկը կը դնէք, ուրաթ առտու կանուք, մարդու մը հետ չխօրաթելով, հոռունիդ չը նայելով ծովին քէնարը կը տանիք, իրեք հեզ՝ «ալըն աղղընըղըն տասընը՝ վէրին Միւրիճանիկ աղանըն չիֆտաընը» կ'ըսէք, չիտակ ժամ կ'երթաք մոմ մը կը վառէք, մէկ պանը չի մնար :

— Աստուած պակութինդ չուցուցունէ, էլմոն տուտու, դաւկներէդ ինդաս :

— Էյ հապա, պան կիթնալ նալ պաշխա պան է :

— Քա ի՞նչ կ'ըսես, քուրուկ, պան կիտնալու պէս աղէկ պան կայ զահէր, էրնէ՛ք քեզի :

Այս և ասոր մօտ խենթութեամբ միջոցներով ամիս մը ժամանակ անցընելէ վերջ հիւանդին վիճակը օր ըսա օրէ կը ծանրանայ և կը ստիպուին առաջնակարգ բժիշկի մը խորհուրդներուն դիմել. այս վերջինն իր քննութիւնը կատարելէ յետոյ կը հաստատէ լեարդին մէջ դոյացած պալար մը, իբրեւ հետեւանք ոգելից ըմպելիքներու չափազանց դործածութեան, որ կը բուժուի վիրաբուժական ծանր գործողութեամբ մը մեր Աղզ. Հիւանդանոցին մէջ : Այս հիւանդութիւնը խրատ կ'ըլլայ Միրիճանիկ աղային անգամ մըն ալ ոտք չդնելու դիտմունք, և փոքր անհանգստութիւն մը զգալուն պէս՝ օրինաւոր բժիշկի դիմելու :

• •

Այս կարգի օրինակներ կարծուածէն շատ կը պատահին, աւա՛ղ, մանաւանդ աղքատ ու սղէտ ընտանիքներու մէջ, սակայն հանրութեան անծանօթ կը մնան : Մեր ամանուս պարտքն է մտնել ընկերութեան զանազան մութ խաւերուն մէջ և հոն տիրած տգիտութիւնը և անկէ առաջ եկած չարիքները երեւան բերելով, պայքարիլ անոնց դէմ :



ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Պարզամիտ մարդուն մէկը օր մը մեծ-կակ պնակ մը առած ձեռքը խոհանոց մը կը մտնէ և կը յանձնարարէ կերակուրներու իւրաքանչիւր տեսակէն քանակաւն փարայի լեցնել իր սնակին մէջ : Խոհարարը այս տարօրինակ յոճախողին յանձնարարութիւնը կատարելէ վերջ երբ կը տեսնէ որ դուրս ելնելու կը պատրաստուի ան :

— Տեսա՞ր մի մարդը , կըսէ ետեւէն , ճաշակն ալ ասանկ ըլլալու է :

Մեր պարզամիտ մարդուկը երբ կը լսէ ճաշակին գովասանքը , ետին դառնալով կը հարցնէ .

— Ճաշակ ալ ունիք :

— Հարկա՞ւ . . . կը պատասխանէ խոհարարը :

— Ուրեմն քսան փարայի ալ անկէ տուէք :

* *

Անմարտողութենէ տառապող հիւանդի մը համար բժիշկ մը կը կանչուի տունէ մը :

Բժիշկը բաւական հեռի ըլլալուն հիւանդին տունէն , երբ կը հասնի մեռած կը գտնէ անիկա . ու երբ կը պատրաստուի ետ դառնալ , պարագաները , որոնք տակաւին հաւտացած չէին տիւր իրականութեան , թախանձագին կը խնդրեն անգամ մը աչքէ անցընել զայն . բժիշկը սակայն երբ կիմացնէ իրենց թէ՛ չափազանց շատ ուտելուն հետեւանքով չէ կրցած մարտել և անշնչացած է յաւիտենապէս , ասոնք անանկ սոսկալի վայնասուն մը կը փրցնեն որ խեղճ բժիշկն ալ կը շուարի և մխիթարական քանի մը խօսք ըսած ըլլալու համար :

— Ինչո՞ւ կուլաք բարեկամներս , կըսէ , բաւական է որ ձեր հիւանդը անօթի չէ մեռած :

* *

Ականաւոր գիտունի մը երբ կը հարցուի օր մը թէ՛ գիտութիւններուն մէջ ո՞րն է ամենէն դժուար ձեռք բերուելիք բանը , կը պատասխանէ .

— Է՞ն դժուար գիտութիւնը ինքնաճանաչութիւնն է :

Ու երբ կը հարցուի թէ՛ ի՞նչ կերպով կարելի է բառնալ տիրացուական ըսի-ըսալը .

— Ատիկա , կ'ըսէ գիտունը , կարելի է վերցնել միմիայն պարտաճանաչութեան գիտակցութիւնով :

* *

Խնայասէր մարդուն մէկը նոր տուն մը շինած ու ընտանեօք մէջը մտած ըլլալով ծանօթներ , բարեկամներ և աղքատներ « բարով-նըսողիք » ի եկած էին : Ասոնցմէ մին տունին ամէն կողմը աչքէ անցնելէ ետքը , տան տիրոջ դառնալով երբ կըսէ թէ՛

— Տունին մեծութեանը նայելով խոհանոցը շատ պղտիկ ինկած է :

— Իրաւո՞ւնք ունիք , բարեկամս , կը պատասխանէ ան , և սակայն պէտք է գիտնաք թէ՛ այս տունը չէի կրնար ձեռք բերել եթէ մինչև հիմա նստած տուներուս խոհանոցներն ալ աս պղտիկութիւնը չունենային :

Յ. Մ. Ա.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐՔԱՐԱՆ

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Վարժարանիս Իէ. արեւելացի կրկնի Սեպտեմբեր 6 ին (Ն. Տ.) : Հաստատութեան Տնօրէն Վեր. Ռ. Զեյնալըսի եւ իր Տիկինը արդէն վերադարձած են իրենց երկամայ բացակայութենէն , եւ յառաջիկայ տարի ուսուցչական խումբին վրայ պիտի աւելնան Գանասայի մէկ նշանաւոր համալսարանէն երկու Ամերիկացի օրհանաւարներ , որոնց մէկը գլխաւորապէս պիտի աւանդէ առեւտրական դասընթացքը :

Աւակերները ընթանեկան խնամք կը վաշեկն գիւտերիկ ուսուցիչներուն , հաստատութեան մասնաւոր բժիշկին հսկողութեան եւ Տիկին Զեյնալըսի մայրական հոգածութեան տակ :

Գիւտերիկ աւակերներուն տարեթուական է 16 Օսմ. ոսկի , 8 ոսկին Սեպտեմբերի սկիզբը եւ մնացած 8 ոսկին Յունուարի վերջերը վճարելի :

Վարժարան յատուկ ուսուցիչ մը ունի գործիական երաժշտութեան համար , այս դասին համար տարեկան մասնաւոր վճարումն է 1 1/2 ոսկի Օսմ.

Աւելի տեղեկութիւններու համար դիմել Մր.Բիքի Պայպրի-Հանու , Կ. Պոլիս , կամ Տնօրէնութեան՝ Պարսիզադ : 10—3

ԳԻՒՂԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ

Տանտիկինը նոյն առտուն սովորականէն կանուխ արթնցած էր քանի մը դրացիներու հետ երգիքը ելլելով մօտէն ըմպելու ամառ առտուն շաղն ու ցօղը :

Տանիքը քիչ ետք ծածկուած է կիններով, աղջիկներով, նահապետական տեսարան մը, ուր մարդ հաճոյք կ'ըգայ, ուր ո'չ կեղծիք և ոչ ալ նախանձ կրնայ մուտ գտնել: Մերթ զուարճարանութիւններ, և մերթ ալ հինօրեայ հետաքրքրաշարժ հէքերիներ, որոնք իրենց յաջորդականութեան մէջ մերթ սարսափ կը տղաւորեն և մերթ կոկորդալիք քրքիւններ կը խլեն :

Այս խմբակին խնծիղն աստիճանաբար կ'աւելնար, որչափ արեւը բարձրանար հորիզոնին անկիւնէն :

Տանը մէջ երկու անմեղուկ եղբայրներ, պէրիկ մանկերտիներ, իրարու պլլուած կ'ապրէին զուարթ, խանթակաթ մօր մը աղապատալից գուրգուրանքին առարկայ : Աստուծոյ ալ շլաղուց անթնցած տանիք կը վազեն խաղալու :

Մինչ միտքերը երեւակայութեան թռիչներ առած կը սուգէին անսահման տենջերու ոլորտին մէջ՝ տունը, որ հին ու մին էր, յանկարծ փլաւ :

Ամէն կողմէ գիւղացիներ կը հասնին :

Այն տունը՝ որուն տանիքին վրայ խռնուած էին գուռ դրացիք, զբօսնելու, իր վրայ կքած փլած էր, սրտաճմրիկ պատկեր մը պարզելով :

Վայրկեան մը առաջ զուարճարանի մը մանրանկարը պատկերով սա յարկը, իր բոլոր ծանրութիւնովը տարածուած, ցրուած էր : Հոս հոն ցիցեր ու կոտրած տախտակներ : Անձնութիւններու հուրը սրտերնուն մէջ բորբոքած քանի մը հոգիներ իրենց ջգուտ բազուկները հանգրիճած կը պեղեն հողը հեւ ի հեւ : Պահ մը հրաշքը մարմնացում կ'առնէ հոս : Վեր վերցուած տանիքին տակէն ութը հատ ողջ հոգիներ կը կանգնին և քիչ մը անդին ծնրադրելով, իրենց շնորհակալութեան մրմունջները ամենակալին կը վերացնեն թռչուններու դաշնակաւորումներուն հետ խառնելով : Առաստաղի ձողերուն մէկ ծայրին պատին կռթնելովը պահպանուած էին արկածեալները :

ԳՐ. Տ. ԱՐՐԱՀԱՄԵԱՆ

ՔՐԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Վառ երկինքին շղարշները կ'անհետին, Ու կ'անուշնայ թիչ եքերը թրքոռուն, Մեղկութիւն մը կը ծաւալի մեջ օդին Ուր իրիւմներն կը ցընցուղին, երեւո՞ւն :

Կանցնին կամաց, ևսգանով մը, յուշաբար, Դիւնովցեալ վարդ հիւսկեկներն յուսածիւր, Ու իմ արքշառ ճայռածներն սիրալսո՞ւ ինչ կը քերեն սրտնորիւններ սեւածիւր :

Թաւ գիշերուան մութին մեջէն ցաւազա՛ր, Թաղոնքիւններ սարսուռի պէս ճաղկալի, Տարածուելով անհունին մեջ յամրաբար, Կ'իջեն ևսկաւ, հոգոյս վրայ սգակիր :

Տխրութիւն մը կը գալարուի հոգոյս մեջ, Տխրութիւն մը՝ զոր խօշ սերը կը քերէ. Խենդ մը կ'ընեն այն թովները յուսապիտ, Որով կարծես ծնունդ կ'առնեն իրերէ :

Միռնած երգեր, շուրջս սակաւ կը գեղուն, Միռն երգեր՝ զոր կը շեւն անդադրում, Ջութակներու եղերգիներն սարսուռուն Մութին ալիքէն կը ծակծկեն շաւ հեռո՞ւն :

Ու գիրգ համբոյրն, մեղմ շոյանք զո՛վ հովին, Թարմ այտերու քօշ արցունքը չորցնեն Ո՛հ, պարսաւած ալիքս ա՛յ կը գոցուին Աղջաւուղջին շարժքեան մեջ նայելէն :

ՎԱՀՐԱՄ ՄՈՄՃԵԱՆ

PROFESSEUR ANGEL

Վկայեալ Բարիգի եւ Պեղիկի
համալսարաններէն

Ամէն անոնք, որոնք կուզեն քիչ ժամանակուան մեջ, խիստ դիւրամատոցի պայմաններով հիմնովին սովորիլ Գերմաներէն լեզուն՝ ինչպէս նաև Ֆրանսերէնը

ԱՌԱՋԻՆ ԱՌԹԻՒ

պէտք է դիմեն Պանք-գալու. Բալուգաի վաճառատունը, ուրկէ պիտի կրնան ստանալ հարկ եղած մանրամասնութիւնները դասախօսութեան առթիւ :

10—9

ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԻ

Ճրագալոյցի իրիկունը անբացատրելի ուրախութիւն մը կը թեւածէր գիւղակին մէջ։ Շինականներ դադրած պահիկ մը իրենց դաշտային քողը աշխատանքէն՝ կը պատահապատահ գուարթաղին տօնելու Ձաթիկը։ Իրենց հիւղակը վերադարձող խումբ խումբ գործաւորներ բերկրալիւր ասուլիսով մը՝ վազուի խնձոյքները կը ծրագրեն, ութսուտնամայ պառաւներ Մեծ-պահիկ երկար ծոմադահութեամբ կմախացած՝ եկեղեցւոյ մը թին անկիւններէն կը փսփսան իրենց խորհրդաւոր աղօթքը՝ որ շիջելամերձ սրտի մը ապաշաւի հառաչանքով խառն՝ առ Ստուած կը բարձրանայ։

Սակայն միշտ խորհրդաւորութիւն մը կայ այս տօնական օրերու ցնծութեանց մէջ։ Գիւղակէն քիչ հեռի ծաղկադաշտի բլրակի մը ստորոտը՝ խրճիթ մը կը նշմարուի լռին՝ և տխրասարսուռ երևոյթով, խիթեղադաշտ տանիք մը, երկոյս սեւցած պատուհաններ՝ որոնց թուղթէ պատառիկները կը տարտաբերին հովին շոյանքին տակ։ Բանդուած փոքրիկ դուռ մը, փլփլած պատեր՝ ձմեռնային քամիներու՝ անգութ պայքարէն յաղթահարուած, իսկ ներսը՝ մուրերով ծածկուած տախտակամած մը, որուն մէկ անկիւնը կը բարձրանայ խրճիթին բուխերիկը։ Ինչ կը յատկանշէ այս խեղճուկ տնակը։

Բոլոր գիւղացիք լաւ կը ճանչնային այնոր անցեալը, հոն կը բնակէին զոյգ մը, իրենց տղեկը և պառաւ մը։ Ո՛ւր էր այժմ այդ ընտանիքը։ Ափսոս, թոքախտը՝ այդ անողորմ հիւանդութիւնը շատ վաղ իւլած էր այս երջանիկ բոյնին զոյգ կոկոնները, միայն պառաւը և տղեկը մնացած էին։

Ձաթիկ այս ցնծալիւր զարթօնքը՝ չէր փարատած խրճիթին սուգը։ Կինդ տարու տղեկը միշտ կ'աղաչէր իր մայրիկին որ եկեղեցի տանի զինքը Ձաթիկ սուսուտը, և ահա հասած էր այդ օրը։

Գիշերը տակաւ կը յառաջանար, և գիւղակը կը խորասուզուէր մութին մէջ։ Ամէն տունիւրէ լոյս մը կը պլպլար և ամէն սրտեր ուրախութեամբ կը բարախէին Միայն խրճիթը չէր լուսաւորուած, այդ մռայլին մէջ՝

մռայլ հոգի մը կ'արտասուէր, պառաւին զրկաց մէջ կը մրափէր դժբաղդ մանկիկը, եկեղեցի երթալու անուշիկ երազներով։ Պառաւը անքուն կը մնար այն իրկունը, իր զաւկին և հարսին յիշատակը դառնութեամբ մը կուգար խոշտանգել սիրտը։ Կ'արտասուէր անմխիթար վշտով, ցաւատանջ ողբով մը, որոնք գերեզմանի ստուերը կը պատուէին իր սիրելիներուն ի խնդիր։ Պառաւը որ քնացած էր իր վիշտին մէջ, ընդոտ արթնցաւ այս ցաւալից մրափէն՝ երբ լսեց հեռուանց ժամուն զանգակին ձայնը, որ Ձաթիկը տօնելու կը հրաւիրէր։ Արթնցուց իր թռռիկը՝ եկեղեցի տանելու համար զայն։ Պառաւը ցուպի ձեռին իր թոռնիկին հետ եկեղեցի հասաւ։ Անկիւն մը քաշուած կ'աղօթէր հոգեմբմունջ։ Եկեղեցին լեցուած էր հաւատացեալներու լաղմութեամբ մը, ամէն ալ հաղուած շքուած փոքրիկ տղաքներ նոր նոր զգեստներ հագած և ձեռքերուն մէջ մէկ մէկ կարմիր հաւկիթ բռնած խնդրին կը կենային մէկ կողմ։ Այս տեսարանը խեղճ պլուկին ուշադրութիւնը գրաւեց, ինք ցնցոտիներով ծածկուած էր, չէր համարձակեր անոնց մօտենալ։ Որչա՛փ շուտ ծնունդ առած էր այս զգացումը խեղճ մանկան մէջ։ Կը տեսնէր քէթ կարմիր հաւկիթ մը ունենալ, բայց ո՞վ պիտի տար զայն իրեն։

Խուռն ամբոխը հետզհետէ կը սկսէր քակուիլ, առանց ուշադրութիւն դարձնելու այս արգահատելիներուն։ Մէկ քանի վայրկեանէն պարպուած էր ամբողջ եկեղեցին։ Գիւղացիք հանդարտ սրտով կ'երթային իրենց յարկերուն տակ զուարթանալ։ Պառաւը աւօթքի տիւուր մրմունջով մը հեռացաւ և կեղեցիէն։ Իր շուրջը ամէն ինչ զուարթ կը տեսնէր, ամէն շրթունքի վրայ ժպիտ մը կը ցոլար։ Ինքն ալ ուրախացիր էր ժամանակին իրեններուն հետ, բայց հիմա ամէն բան երազ էր իրեն համար։ Իրենց խրճիթը հասան տղեկը տիւուր էր, աչքերը արտասուքով լեցուած, իր շուրջը հայրիկը և մայրիկը կը փնտռէր՝ որ իրեն ալ կարմիր հաւկիթ մը տան, սակայն լուռ էր ամէն ինչ, չէր զիտեր որ մեռած են անոնք։ Կեկեղանօք սկսաւ իր մամիկէն կարմիր հաւկիթ մը ուզել, յուզուած էր դժբաղդ ման-

կիկը. ուրկէ՞ պիտի գտնէր իր մամիկը կարմիր հաւկիթ մը, որի՞ գուռ բազիէր, որի՞ աղաչէր որ կարմիր հաւկիթ մը տային իր թոռնիկին. ի զո՞ւր կը տանջէր ան միտքը: Օրը կը տարածամէր, զիւղի խաւիճանութիւնները ծայր աւել կը սկսէին: Ոչ ոք կը նայէր խրճիթին կողմը: Այն գիշեր ալ պառաւը քնացուցած էր իր թոռնիկին ընկող որ «վաղը հայրիկդ կարմիր հաւկիթ պիտի բերէ»: Տղեկը խաբուած էր:

Ու՛ մեռելոցի առաւելումը երբ պառաւը թոռնիկին հետ գերեզման կ'երթար իր սիրելիներուն վրայ աղօթք մը մրմնջելու և կաթիլ մը արտասուք թափելու համար, թոռնիկը միամիտ զուարթութեամբ մը կը հարցնէր.

«Մամիկ, հայրիկս պիտի բերէ՞ հիմա կարմիր հաւկիթ»:

Ա. ՀԱՐՈՆ Ս. ՏՍՏՈՒՐԵԱՆ

ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Լուսինը մեղմիկ կը փայլէր
Գարնանային գիշեր մը,
Երանուրեան ջերմ տեղումը
Զի՛նք դիտէի հոգեպէ՛տ:

Անգղայական ճղճութեամբ
Ընդարմացած եր հոգիս,
Իր սիրական աչիքն մեջ՝
Տանջող ցաւ մը չը տեսայ:

Գորովանոք արագի՛ն
Կը փառէինք իրարու,
Աննիւթական հեռութեանց
Կրելով բե՛ռը բուլակի:

Գեղգեղանքը ճրքահիւս
Մեր սիրագեղ պաշտումին,
Քնարեղային աւիւնով՝
Տաղերգութեան խառնուրդ մ'եր:

Վերջիւումներն քղծալի՛
Երանութեան ժամերուս,
Մեքիս խորէն կարէցներ՝
Կայլակ մը ցօղ աչիս մեջ:

Ա. ԳՐԱՆԻԿ ԵՍՏՅԵԱՆ

ԱԶՔԵՐԴ

Ուժեղ կամփոյ, վրսեմ, խրոխտ քնուրբամբ՝
Երբեմն հոգիս կը խայտար,
Հպարտ եի պատանուքեանս մեջ անսմայ
Ու միշտ հանդարտ, անմոռար:

Բայց, ո՛հ, հիմա աշերուս մեջ արցունքներ,
Զինք ցողին պէս անքրտան,
Լոյծ այտերու կը կարկրքին անվեհեր,
Վիշխիս շիթերն վար կ'իջնան:

Սեւ սարեղեկ մագերուս սակ զանկրս մինչ
Կը փոքորիկ, կը խռովի,
Հեզ այտերու հիմա քրտած եւ աչ հինչ,
Զոր տերեւ մ'եմ մեղմ հովի:

Այլեր եին, զոռ արծիւին մրաստեւ,
Բուլին աշերդ սեւաշուր,
Հաղեցին գիս, յուզուած ծովուն պէս սեպ-սեւ
Բու աշերդը հրաշոյծ:

ԻՍԿՈՒԶԻ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՀԱՅՈՒՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՏԱՐԱԶԱՐ

Այս վարժարանը, զոր կ'փութեն ինն անդամներէ բաղկայած Խնամակալութիւն մը, եւ բնիկ ու Ամերիկացի 11 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը, հիմնական դաստիարակութիւն մը կու տայ բոլոր իրեն դիմող հայ աղջիկներուն: Կ'աւանդուին բնական, իմաստասիրական, չափակ սն եւ այլ գիտութիւններ: Մասնաւոր ոյժ կ'ստանան հայերէն եւ անգլ. լեզուներուն. կ'ուսուցանուին նաեւ քուրճերէն եւ Ֆրանսերէն լեզուները: Վարժարանին ներքին ընդարձակ եւ օդաւե՛տ շէնքերը, ինչպէս նաեւ խնամակալութեան երկու բժշկ. անդամներ մեծապէս կ'ապահովեն աշակերտներէն առողջութիւնը: Ա'աւանդուին երկաթուղին, որուն մէկ մասնագիծը մինչեւ Բաղսա կ'երկարի, համբարգրութիւնը խիստ դիւրին եւ հանելի կ'ընծայէ: Գիշերօթիկներու տարե. քուսակն է 12 օսմ. ոսկի, զոր երկու մասնաւորութիւն պէտք է հասուցանել: Դասնակի դասի համար 5 կամ 3 ոսկի կ'ապահանջուի, դասառութեան քիւրճ համեմատ: Երգեհոնի դասի համար 2 1/2 ոսկի կ'ապահանջուի: Վարժարանին ԻԱ. տարեգումը կ'սկսի Մեղս. 13 (Ն.Տ.). Դե. իրիկունը: Վարժարանին նոր լայնագիւղն ուղղութեամբ ձիւ կ'ընկուի:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մե. Բիրի, Պապըլ Հառու, Կ. Պոլիս, կամ գրել Տոնգ. Ս. Էմ. Գալպէտեանի, Ասեմապետ Խնամակալութեան, Ասաբագար: 8-3

[6]

ԼՈՒԻ ժԱԲՕԼԵՕ

ՀԱՄԱՐՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ԿԱՊԻԿՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԻՆ ՄԷՁ

ԿՈՐԻԼԸ ԵՒ ԻՐ ԲԱՐԲԵՐԸ

Կորիլը, կապիկներու աշխարհին այս հսկայ ներկայացուցիչը միշտ հետաքրքրած է ուղեւորները, հին դարերէ ի վեր: Իր բարձրն ու սովորութիւնները շահեկան են:

Ափրիկեան անտառներու այս սոսկալի բնակիչին սովորական գնացքը երկու ոտքի վրայ չէ, այլ չորս թաթերու վրայ, և արտակարգ արագութիւնով մը կը վազէ, շարժելով բազուկներն ու որունքները միանգամայն: Երբ կը հալածուի կամ յարձակում կը գործէ կարճ մուռնչ մը կ'արձակէ, խի էգերն ու պզտիկները սուր ճիչեր: Մայրերը տեսակ մը դորովոտ կազկանձիւն ունին իրենց պզտիկները կանչելու համար: Յարձակման ատեն Կորիլը չընկրկիր երեսք, և վայ աֆն որսորդին որ չի կրնար իր կրակը վառ և նշանաւորութիւնը ճիշդ պահել: Վայրկեանի մը մէջ իր խոշոր հրացանը յարդի չիւղի պէս փչուած է և ինքն ալ ծուիկ ծուիկ եղած է: Գազանին՝ ճիրաններով զինուած ոտքի մէկ հարուածը մարդուն փորոտիքը դուրս կը թափէ, կուրծքը կը ջախջախէ և զուլիւր կը ճզմէ: Մարդուն համար չկայ աւելի վայրագ և անահնուելի կենդանական յարձակում մը քան Կորիլինը: Գազանը իր խոշոր բազուկներով կը բռնէ զայն, կուրծքին վրայ կը քաշէ ըմբշամարտողի մը պէս և կը խեղդէ իր դունչին տակ ճզմելով անոր անդամները:

Կորիլները խումբով չեն բնակիր, այլ զոյգերով: Երիտասարդները յաճախ չորս հինգը կը մեկտեղին, անտառային արշաւներու համար, բայց այդ թիւէն աւելի չըլլար բնաւ: Մեր արուները, անոնք որ իրենց ընկերը կորսնցուցած են անտարակոյս, կը թափառին մինակ, անտառներու մթին վայրերը և աւելի կատաղի են քան միւսները:

Էգ Կորիլը աւելի փոքր և փափկակազմ

է: Երկու սեռերուն մէջ ալ կուրծքը անմազ է և զուլիւր մազ կը բուսնի, տեսակ մը չէկ վարս, որմէ խոյրոպներ ալ կրնան կազմուիլ: Կիններուն քով դիւրուն մազը աւելի ուշ կը բուսնի քան արուին քով:

Դեռահաս Կորիլը որ դեռ զոյգ չունի, կամ ծերունի արուն որ իր զոյգը կորուսած է, թափառական կեանք մը կը վարեն, իրենց քահանայքներուն և անօթութեան համաձայն կը շահատակեն: Բայց այն որ իր էղին հետ կ'ապրի, իրեն համար ապրտան մը կը չինէ ուր մայրը կը հանգչի իր պզտիկներուն հետ և արուն ճիւղերէ չինուած իր հիւղին կատարը կամ անոր կից ծառին գագաթը ելած, կը հսկէ արմատներ կամ վայրի անանաս կրծելով, որպէս զի ու է մէկը չկայ խանգարել իրեններուն հանգիստը:

Բացարձակ ճշմարտութիւն մըն է թէ նորածին Կորիլը կը դիեցուի 8 ջ ամիս և դոնէ տարի մը կը կարճաի իր մօրը մասնաւոր խնամքին: Այդ տարիքին միայն կ'սկսի քուլել, զգալի կերպով դիւրաշարժ կը դառնայ 3-4 տարեկանին և իր ամբողջական զարգացումը աւելի ուշ 10 է 12 տարեկանին կ'ստանայ: Կորիլներուն զխաւոր հոգը իրենց ընտանիքն ու զաւակներն են: Փոքրիկ Կորիլը միշտ իր մօրը զիրկն է և անոր կուրծքէն կ'ախուսէ: Այս վիճակին մէջ անահնակալ պարագայ մը երբ պատահի փախուստը դժուար է: Բայց արուն զարմանալի բնագոյով մը միջոցը կը գտնէ իր փոքր ընտանիքը ծածկելու անտառին անթափանց ձելի մէկ խորը, կը մոլորեցնէ թշնամին և բաւական մը առաջ կ'երթայ պայքարելու յարձակողին դէմ:

Շատ անգամ ճամբորդներու կողմէ մեղահեաց կարծուող Կորիլներ, ընտանիքի հայրեր են, որոնք սնունդ գտնելու ելած և սակաֆն որսորդներէ հալածուած, ամբողջ

օրեր անոնց հետ կը խաղան, առանց անակնկալի ենթարկելու իրենք զիրենք, որպէս զի իրենց ընտանիքին երգիքէն հեռացնեն այդ որսորդները:

Երբ փոքրիկ Կորիլը կաթէ կտրուած է, կը քալէ, կ'սկսի ուտել և էգը ուրիշ մը աշխարհ կը բերէ անմիջապէս և նոր խնամքներ, նոր տածումներ են որ ծայր կուտան իրեն համար: Պատանի Կորիլը չի ձգեր իր ծնողքը մինչև զոյգ առնելու ժամանակը, այլ քանի մը ընկերներով կերթայ անդին ասդին խաղալ, ժախնակ անցընել:

Կորիլներուն անունդի խնդիրը շատ դժուարին է: Հասարակածային անտառի մը մէկ քառակուսի մզոն մասը կրնան անուցանել հարիւրաւոր կապիկներ, որովհետեւ անոնք կուտեն ամէն տեսակ հում, ամէն տեսակ խոտ որոնք թունաւոր չեն և իրենց քիմքը կը դժաշտեն, իբր հաճոյալի բաներ, սըտուղներով և Կուրիայի արմաւենիով: Անանասը, վայրի չաքարիզէնը, ինչպէս նաև խել մը այսօրինակ բոյսեր այնքան առատ են այդ կողմերը որ, Կորիլը երկար թափառումներու պէտք չունի իր անունդը քաղելու:

Կորիլին ուժը առասպելական է: Այն տեղերը ուր ինք կը լնակի, ամէն քայլի կրնայ հանդիպել, վագրի, ընձառիւծի, յովազի և խիստ հազուադէպօրէն ալ առիւծի: Կորիլին սոսկալի կղակը կարող է անուշեղէնի կտորի մը պէս ճմլել առիւծի մը ուսը: այդ կղակը իր ձեւքերուն և ոտքերուն ճիւղաններուն հետ ամենազոր միջոցն են պաշտպանութեան:

Էգ Կորիլը արուին ո՛չ քաջութիւնը ունի և ոչ ալ ուժը: Բնիկները անոնց հետ գըլուխ կրնան ելլել նետով մը կամ որսի պարզ դանակով մը: Էգ Կորիլը ինքզինքը կը պաշտպանէ այն ատեն միայն երբ պաշարուած, ջրհեղած է, և փախչելու որ և է բաղդ չի ժպտիր իրեն: Այն ատեն կատաղութիւն մը կուգայ վրան, կը խածատէ, կը ճանկուտէ, աղեկաւոր ճիւղեր կ'արձակէ, արուն կը կանչէ իր օգնութեան: Եթէ որնունդի փնտառուքը շատ հեռուները չեն տարած արուն, այն ատեն տեսարանը յանկարծ կը փոխուի, ահաբեկիչ մոնջիւնը կը լսուի և Կորիլը ուրուականի մը պէս կը յար-

ձակի անոնց վրայ որոնք կ'ապառնան իր ընկերուհիին: Ճիրանի հարուած մը հոս, ոտքի հարուած մը հոն, հանդիպած մարդը կը զլտորի մէյմըն ալ չեղլելու համար: Մարդ հրացանը վերցնելու անգամ ժամանակ չունենար, ակնթարթի մը մէջ զգեստնուած, պատառուած է սոսկալի դադանէն:

Բարեբաղդաբար Կորիլը մարդու մը չափ դժուարին կը մտնի: Գնտակ մը իր կուրծքին, ահա գեւախն կը տապալի երեսի վրայ իր բազուկները շարժելով և հառաչներու, հանգիւններու խառնուած ճիւղեր արձակելով, որոնք ահռելի ազդեցութիւն մը կը գործեն մտիկ ընողին վրայ: Մահուան այս դերապոյն վայրկեանին ահռելի կենդանին ձայնիւ կը հանէ որոնք մարդկային բան մը ունին, իր վերջին հառաչը պատրանքը կուտայ բնական կարգին մէջ աւելի լարձր կենդանիի մը և այնպէս կը թուի թէ քաջանութիւն մը գործուած է:

Ուղեւոր մը բնիկներէն առնելով կը պատմէ թէ երկրին մարդիկը, ճամբորդած ատենին, զիչիւր կրակ կը վառեն անտառին մէջ: Հետեւեալ սառուին երբ անոնք մեկնած են, Կորիլները կուգան կը նստին կրակին շուրջը մինչև որ մարի ան, բայց այնչափ մտաքննութիւն չունին որ նոր փայտ դնելով արծարծեն զայն:

Կորիլները յաճախ փիղերու կը հանդիպին, որոնք եւս անունդ փնտառելու ելած են: Այն ատեն, այս վիթխարի կապիկները կռուիի և խոշոր փայտի հարուածներով ա՛յնքան կը ծեծեն հակա կենդանիները որ ասոնք կը փախչին պոռչտալով:

Կորիլները երբեք ինքզինքնին չեն յանձնել ողջ ողջ: Տասը, քսան հոգի նոյն իսկ չեն կրնար զայն ձեռք ձգել, ասոր համար փոքրիկները կը փախչեն, թունաւոր նետեր արձակելով: Երբ Կորիլ մը մեռնի, իր ընտանիքը անոր դիակը կը ծածկէ ճիւղերով և տերեւներով: Անտառներու մէջ այս անսակ զերեզմաններու կը հանդիպուի յաճախ:

Կորիլը կենդանիներուն մէջ ամենէն կատաղին և քաջը կրնանք նկատել: Մինչ ինք չմեղմանար բնաւ, չընտելանար և բացարձակապէս անընդունակ է ամենափոքր կրթանքի մը, անդին իր ամենամօտ տեսակը Շէմբանդէն փոքր հասակէն բռնուելով դուրս կը վարժուի, և ընկերային կը դառնայ:

(Շարունակելի)

Արեօնասէր ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆՅԱՆ

Տպագրութիւն — ՃԻՀԱՆ ԳՐԱՏԱՆ

Պապ-Ալի հասէսի բիւ 23

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՊԵՐՁԵԱԾ ԻՆՍԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուրբան Համամ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տու-
կունութեամբ և գիներու անմրցելի ա-
ժանութեամբը շահած է բոլոր իրեն գի-
մուլ յաճախողաց վստահութիւնը, այս
անգամ ձմեռուան յատուկ ընտիր հա-
զուտներու, կանանց թելըրիկներու և
տղայոց չիք և գիմացկուն ֆօքսիւններու
ծովս մթերք մը պատրաստ ունի, որ
շերմապէս կը յանձնարարուի ամէն ա-
նոնց, որոնք պէտք ունին ներկայ եղա-
նակին հագուստի և ուրիշ նմանօրինակ
սկիտողից .

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրշ է .
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին .

47—50

ՇԷՆՔԵՐՈՒ ՅԱՏՈՒԿ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԱԹ ՆԵՐԿԵՐ

National wall coating & Lythite

Աժան, լուսաւոր, շուտ կը չորնան,
վրայ չեն ելներ, գոյներնին չեն նետեր,
ջուրի և անձրեւի կը դիմանան, մըռկ-
ները կը ջնջեն ևլն. ևլն.

Պատանայի ներկերուն իւրաքանչիւր
քառ. արշընը 10—15 փարայ .

Ներսի և դուրսի ներկերուն իւրա-
քանչիւր քառ. արշընը 20—30 փարայ :

Տեղւոյս ամէն կողմի Պատ. յաճախոր-
դաց դիւրութեան համար, վաճառա-
տունս պատրաստ է սոյն գներով իր վը-
րայ առնել ամէն գործ, թէ ներկն և
թէ գործաւորողէիլ մէջն ըլլալով :

Թուրքիոյ միակ կեդրոնատեղին

Կ. Պոլիս, Ալաճա-համամ, Պագըր-
ճըլար թիւ 26, Գ. Աճէմեան : — Գա-
ւառները գործակախներու պէտք կայ,
դիւրամատչելի պայմաններով :

12—20

ՅԷՆԻՔՍ ՕՐԲԻՇԻԷՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵՍԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ

ԿԵԱՆՔԻ ՃԻՒՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանի

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք և կարասիք .
ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային
կանքի վրայ :

ՅԷՆԻՔՍ Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ շոգինաւի՝ եւ ա-
ռագաստանաւի վրայ :

Ընկերութեան գրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասեն-
եակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16 :

Ընկերութիւնս կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ :

Լիազոր Գերկայացուցիչ


Գ. ՅԷՐԱՏԵԱՆ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏՐ, ԱԺԱՆ

ԵԻ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահանգափու, ձեյալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
Վ Ա Ժ Ա Ռ Ա Տ Ո Ւ Ն
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

Մ Ա Ս Ն Ա Ի Ո Ր Ա Բ Ա Ր

Ֆոնոկրաֆի Է. Դլաններու. Կրամֆոնի
Է. Էրկկոզմ Բլագներու, Կեդրոնա-
տեղի Պահանգ Գաբու, Հաճի Պեքի
Էֆենտի կից, Եալտըզ խանի տակ
քիւ 2: Մասնաճիւղ Պահանգ Գաբու,
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանայ տո-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
շահած համբա-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ծանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլագներ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
գտնուած բոլոր նմանօրինակ ապրանայ հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի տուաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Դաւառներէն եղած յանձնարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնատեղին: